

5.7. Ստանդարտացումը, սերտիֆիկացումը և հավատարմագրումը 2006թ. հունվար-հունիսին

Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2006թ. հունվար-հունիսին ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով:

Ստանդարտացում: Ընդունվել և պետական գրանցում է ստացել ազգային 76 ստանդարտ: ՀՀ տարածքում գործադրվել են 47 միջպետական, 8 միջազգային և 21 ՀՀ ստանդարտներ: Պետական գրանցում է ստացել արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 233 պայման: Թողարկվել է 5 անուն տեղեկատվական նյութ:

Սերտիֆիկացում: Տրվել է համապատասխանության 4661 սերտիֆիկատ, որից 3687-ը՝ ներմուծվող, 40-ը՝ արտահանվող արտադրանքի համար, մնացած 934-ը տրվել է ՀՀ-ում արտադրվող սերտիկական արտադրանքի համար: Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 9 հայտ, որից 4-ը՝ արտադրանքի անհամապատասխանության պատճառով:

Հավատարմագրում: ՀՀ տարածքում հավատարմագրվել է սերտիֆիկացման 6 նարմին և 14 լաբորատորիա:

Ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման գործունեության համեմատական ցուցանիշները, 2006թ. հունվար-հունիս

(հավելածր /նվազումը «-» նշանով/)

	Ընդամենը, միավոր	Հունվար-հունիսի համեմատ, %		
		2003թ.	2004թ.	2005թ.
Ընդունված և պետական գրանցում ստացած ազգային ստանդարտների քանակը	76	- 42.0	- 20.8	- 68.3
Պետական գրանցում ստացած տեխնիկական պայմանների քանակը	233	51.3	25.3	40.4
Թողարկված տեղեկատվական նյութերի քանակը	5	0	- 28.6	66.7
Տրված համապատասխանության սերտիֆիկատների քանակը	4661	2.1 անգամ	45.2	20.4
որից՝				
ներմուծվող արտադրանքի համար	3687	2.1 անգամ	34.1	6.6
արտահանվող արտադրանքի համար	40	- 83.7	- 73.3	- 68.0
Արտադրանքի սերտիֆիկացման մերժված հայտերի քանակը	9	0	0	50.0

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանք: 2006թ. հունվար-հունիսին անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծված և ՀՀ-ում արտադրված արտադրանքի մի շարք տեսակներ:

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքի բաշխվածությունն ըստ երկրների, 2006թ. հունվար-հունիս

Երկիրը	Արտադրանքի անվանումը	Արտադրանքի մոդելը, տիպը	Քանակը
Իրանի Իսլամական Հանրապետություն	Դիզելային վառելիք	-	109820 կգ
Անհայտ	Ապխտած ձուկ	-	145 կգ
	«Սկունբրիա մովիա»	-	24 կգ